ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 փետրվարի 2018 թվականի N 82-Ա
քաղ. Երևան

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԱՅԴ ԾՐԱԳՐՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագիրը (հավելված):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրով քաղաքացիական ծառայողների վերապատրաստումն անցկացնում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրով սահմանված կարգով վերապատրաստման ենթակա են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համապատասխան մարմինների աշխատակազմերի քաղաքացիական ծառայողները:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի զարգացման ծրագրերի և մասնագիտական կատարելագործման վարչությանը՝ համակարգել և վերահսկել սույն որոշմամբ նախատեսված վերապատրաստման գործընթացը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Մ. ԲԱԴԱԼՅԱՆ